ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2008 թվականի N 1322 - Ն

## ՔՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ 2008-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող 2008-2012 թվականների միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ S. ՍԱՐԳՍՅԱՆ

2008 թ. նոյեմբերի 20
Երևան

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն Հինք
Ընդհանուր բաժին
«24» 11 2008 թ. Հավելված
Մուտք № 10865

EK256

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 16-ի N 1322 - Ն որոշման

### Ծ Ր Ա Գ Ի Ր

### ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ 2008-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառումը | Ենթամիջոցառումը | Կատարողը | Ժամկետը | Նպատակը (արդյունքը) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Զբոսաշրջության բնագավառը կարգավորող իրավական դաշտի բարելավում | Զբոսաշրջության բնագավառը կարգավորող իրավական դաշտի վերլուծություն և առկա խնդիրների բացահայտում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ համագործակցելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և ԱՄՆ ՄԶԳ ՄՄՀՀ ծրագրի հետ | 2009 թվականի ապրիլ | Զբոսաշրջության բնագավառում գործարար միջավայրի բարելավման, զբոսաշրջիկների իրավունքների լիարժեք իրականացման ապահովման նպատակով համապատասխան իրավական ակտերի ընդունում |
| | | Բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված քննարկումների կազմակերպում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի հունիս | |
| | | Բացահայտված խնդիրների լուծման նպատակով զբոսաշրջության բնագավառը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում իրավասու մարմիններին | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի օգոստոս | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Ջրաաշրջային այցելությունների վիճակագրական համակարգի բարելավում | Ջրաաշրջության վիճակագրությունը ՄԱԿ ԶՀԿ մեթոդաբանությանը և «Ջրաաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ մասնակցությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության, մաքսային պետական կոմիտեի, քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ԱՄՆ ՄԶԳ ՄՄՀՀ ծրագրի և այլ շահագրգիռ կողմերի | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2008 թվականի դեկտեմբեր | Ջրաաշրջության վիճակագրության համապատասխանեցում ՄԱԿ ԶՀԿ մեթոդաբանությանը և «Ջրաաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին |
| | | Ջրաաշրջության վիճակագրությունը ՄԱԿ ԶՀԿ մեթոդաբանությանը «Ջրաաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքին | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի մարտ | |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | համապատասխանեցմանն ուղղված միջոցառումների մշակում և իրավասու մարմիններին համապատասխան առաջարկությունների ներկայացում | | | |
| 3. | Պետական սեփականություն հանդիսացող բանգարանների, բնության հատուկ պահպանվող տարածքների և պատմամշակութային հուշարձանների արդյունավետ կառավարման մոդելի մշակում | Պետական սեփականություն հանդիսացող բանգարանների, և պատմամշակութային հուշարձանների կառավարման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրության և արդյունավետ կառավարման մոդելի մշակման նպատակով աշխատանաքային խմբերի ստեղծում | ՀՀ մշակույթի նախարարություն | 2008 թվականի դեկտեմբեր | Պետական սեփականությո հանդիսացող բանգարանների, բնության հատուկ պահպանվող տարածքների և պատմամշակութային հուշարձանների արդյունավետ կառավարման (աշխատանքային ռեժիմ, համագործակցություն զբոսաշրջային կազմակերպությունների հետ և այլն) մոդելի ներդրու |
| | | Պետական սեփականություն հանդիսացող բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրության և արդյունավետ | ՀՀ բնապահպանության նախարարություն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կառավարման մոդելի մշակման նպատակով աշխատանքային խմբերի ստեղծում | | | |
| | | Պետական սեփականություն հանդիսացող թանգարանների և պատմամշակութային հուշարձանների արդյունավետ կառավարման մոդելի ներդրմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում իրավասու մարմիններին | ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թվականի ապրիլ | |
| | | Պետական սեփականություն հանդիսացող բնության հատուկ պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման մոդելի ներդրմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում իրավասու մարմիններին | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2009 թվականի ապրիլ | |
| 4. | Ջրտաշրջային ենթակառուցվածքների նկատմամբ գործառույթային և արտաքին տեսքի հետ կապված չափանիշների | Ջրտաշրջային ենթակառուցվածքների կառավարման, դրանց նկատմամբ չափանիշների սահմանման բնագավառում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2008 թվականի 4-րդ եռամսյակ | Ջրտաշրջավայրերի մրցունակության բարձրացում և պահպանու |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | սահմանում | միջազգային փորձի ուսումնասիրություն, զբոսաշրջային ենթակառուցվածքների դիզայնի և նախագծերի ընտրության նպատակով մրցույթների կազմակերպում | | | |
| | | Զբոսաշրջային ենթակառուցվածքների նկատմամբ չափանիշների վերաբերյալ քննարկումներ կազմակերպելու նպատակով շահագրգիռ կողմերի մասնակցությամբ աշխատանքային խմբի ստեղծում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2008 թվականի 4-րդ եռամսյակ | |
| | | Զբոսաշրջային ենթակառուցվածքների նկատմամբ գործառույթային և արտաքին տեսքի հետ կապված չափանիշներ սահմանող իրավական ակտի նախագծի մշակում և ներկայացում իրավասու մարմնին | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի 2-րդ եռամսյակ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Պետական, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների ու մասնավոր հատվածի տրամադրած միջոցների մոբիլիզացմանը, արդյունավետ և նպատակային ներդրմանն ու օգտագործմանը նպաստող իրավական ակտի մշակում | Պետական, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների ու մասնավոր հատվածի տրամադրած միջոցների մոբիլիզացման, արդյունավետ և նպատակային ներդրման ու օգտագործման մեխանիզմների բննարկումներ | ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2009 թվականի 2-րդ եռամսյակ | Զբոսաշրջության զարգացման ծրագրերի ֆինանսավորման միջոցներ մոբիլիզացում, արդյունավետ և նպատակային օգտագործում |
| | | Պետական, մասնավոր, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների տրամադրած միջոցների մոբիլիզացմանը, արդյունավետ և նպատակային ներդրմանն ու օգտագործմանը նպաստող իրավական ակտի մշակում | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2009 թվականի 3-րդ եռամսյակ | |
| 6. | Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության կառավարման և կառուցվածքային բարեփոխում | Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության կառուցվածքային և կառավարման բարեփոխումներին ուղղված ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի ապրիլ | Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության գործունեության արդյունավետության բարձրացում |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | Պատմամշակութային հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքները և զբոսաշրջային բացառիկ գրավչություն ներկայացնող այլ վայրերն անհրաժեշտ ենթակառուցվածքներով ապահովում | Ենթակառուցվածքների ձևավորման համար համապատասխան վայրերի ընտրության նպատակով աշխատանքային խմբի ստեղծում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ մարզպետարաններ<br>Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի (համաձայնությամբ) | 2009 թվականի օգոստոս | Զբոսաշրջավայրերի մրցունակությունը, բնությա( հատուկ պահպանվող տարածքների ու պատմամշակութային հուշարձանների արդյունավետ օգտագործումն ու պահպանումն ապահովելու նպատակով դրանք անհրաժեշտ ենթակառուցվածքներով ապահովումը |
| | | Ենթակառուցվածքների ձևավորման համար համապատասխան վայրերի ընտրություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | |
| | | Ընտրված վայրերում, սահմանված չափանիշներին համապատասխան՝ ենթակառուցվածքների ձևավորման նպատակով հողահատկացման և կառուցապատման իրավունքի տրամադրման արդյունավետ մեխանիզմների մշակում և իրավասու մարմնին համապատասխան առաջարկությունների ներկայացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի հոկտեմբեր | |
| | | Պետական միջոցներով բնության հատուկ պահպանվող տարածքներում ու պատմամշակութային | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2010 թվականի ապրիլ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հուշարձաններին հարող տարածքներում երկու օրինակելի ենթակառուցվածքների կառուցում | | | |
| 8. | Հանգստի կազմակերպման, անհատական ճկուն փաթեթների ձևավորման, հյուրանոցների և հյուրատների ամրագրման, ավիատոմսերի ամրագրման, զբոսաշրջային տարբեր ծառայությունների գնման էլեկտրոնայնացում | Հանգստի կազմակերպման, անհատական ճկուն փաթեթների ձևավորման, հյուրանոցների և հյուրատների ամրագրման, ավիատոմսերի ամրագրման, զբոսաշրջային տարբեր ծառայությունների էլեկտրոնային ճանապարհով գնման հնարավորություններով կայքի հիմնում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի 3-րդ եռամսյակ | Հանգստի կազմակերպմա անհատական ճկուն փաթեթների ձևավորման, հյուրանոցների և հյուրատների ամրագրման ավիատոմսերի ամրագրմա զբոսաշրջային տարբեր ծառայությունների գնման դյուրինացում |
| 9. | Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի նկարագրի շարունակական զարգացում և համաշխարհային զբոսաշրջային շուկայում ներկայացում | Հայաստանը ներկայացնող տպագրական նյութերի և տեսանյութերի պատրաստում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն | 2008-2012 ընթացքում, շարունակական | Համաշխարհային զբոսաշրջային շուկայում և նպատակային շուկաներու Հայաստանի՝ որպես կայո զբոսաշրջության համար գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում և զարգացու |
| | | Զբոսաշրջային թեմատիկ փառատոնների կազմակերպում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2008-2012 ընթացքում, շարունակական | |
| | | Մշակութային փառատոնների կազմակերպում | ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 2008-2012 ընթացքում, շարունակական | |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների և լրագրողների ճանաչողական այցերի կազմակերպում Հայաստան | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2008-2012 ընթացքում, շարունակական | |
| 10. | Ցածր արժողությամբ ավիաընկերությունների ներգրավում և բաց երկնքի քաղաքականության ներդրման հնարավորությունների քննարկում և համապատասխան առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն | Բաց երկնքի քաղաքականության ներդրման և ցածր արժողությամբ ավիաընկերությունների ներգրավման հնարավորությունների քննարկման նպատակով աշխատանքային խմբի ստեղծում | ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2010 թվականի 2-րդ եռամսյակ | Ցածր արժողությամբ ավիաընկերությունների մուտք հայաստանյան շուկա, դեպի Հայաստան օդային փոխադրումների ցանցի ընդլայնում, մրցակցային դաշտի բարելավում |
| | | Բաց երկնքի քաղաքականության ներդրման և ցածր արժողությամբ ավիաընկերությունների մուտքի խրախուսման մեխանիզմների վերաբերյալ քննարկումներ | ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2010 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակներ | |
| | | Համապատասխան գործողությունների ծրագրի մշակում և ներկայացում իրավասու մարմնին | ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2010 թվականի 4-րդ եռամսյակ | |
| 11. | Տրանսպորտային համակարգի | Տրանսպորտային համակարգի, | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2009 թվականի հունիս | Միջպետական և Հայաստանի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բարելավում | տրանսպորտի առնձին տեսակների (օդային և վերգետնյա) համագործակցության ներկա վիճակի ուսումնասիրման և բարելավման ուղղությամբ առաջարկությունների մշակման նպատակով աշխատանքային խմբի ստեղծում | | | Հանրապետության ընդհանուր օգտագործման տրանսպորտի խարմարավետ և մատչելի կապի հաստատում օդանավակայաններում, երկաթուղու կայարաններում, ավտոկայարաններում և ավտոկայաններում |
| | | Տրանսպորտային համակարգի, տրանսպորտի առանձին տեսակների (օդային և վերգետնյա) համագործակցության ներկա վիճակի ուսումնասիրում և դրա բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2009 թվականի 3-րդ եռամսյակ | |
| | | Ներկայացված առաջարկությունների քննարկում և դրանց հիման վրա համապատասխան իրավական ակտերի նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2010 թվականի 2-րդ եռամսյակ | |
| 12. | Հայաստանի և առանձին համայնքների, որպես որպես | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի 1-ին եռամսյակ | Շահագրգիռ բոլոր կողմեր մասնակցությամբ Հայաստանի և առանձ համայնքների, բարենպաս |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | զբոսաշրջավայրի, բրենդինգի ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | | | ու գրավիչ զբոսաշրջավայր նկարագրի ձևավորում շարունակական զարգացու Զբոսաշրջության և սպասարկումների բնագավառում միջազգային հեղինակավոր բրենդերի ներգրավում Հայաստանյան շուկա, ինչպես նաև աջակցություն հայկական բրենդերի ձևավորմանն ու միջազգայի նանաչմանը |
| 13. | Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ մարզպետարաններ<br>ՀՀ մշակույթի նախարարություն | 2009 թվականի 2-րդ եռամսյակ | Համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, զբոսաշրջության բնագավառում գործունեության՝ մայրաքաղաքից դեպի համայնքներ ապակենտրոնացմանը, զբոսաշրջության միջոցով համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակի և մշակութային կյանքի բարելավմանն ուղղված ծրագիր |
| 14. | Հայաստանի, որպես զբոսաշրջավայրի, մարքեթինգի ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ սփյուռքի նախարարություն | 2009 թվականի 4-րդ եռամսյակ | Զբոսաշրջության բնագավառում որակյա հետազոտությունների իրականացում, մարքեթինգային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | քննարկմանը | | | | քաղաքականության ակտիվացում, թիրախայ շուկաների շարունակակ ուսումնասիրություն, յուրաքանչյուր շուկա համար առանձ մարքեթինգային քաղաքականության մշակում և իրականացո հիմնված տվյալ շուկա առանձնահատկություննե վրա Համահայկական զբոսաշրջային գրավչությունների (պատմական, մշակութայի բնական) ներգրավվում հայկական զբոսաշրջային արդյունքներում և դրանց արդյունավետ ներկայացո համաշխարհային զբոսաշրջային շուկայում |
| 15. | Մշակութային զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2009 թվականի 3-րդ եռամսյակ | Ազգային մշակութային արժեքների վերականգնմանն ու պահպանմանը, մայրաքաղաքում և համայնքներում մշակութային կյանքի ակտիվացմանը, մշակութային ռեսուրսների զարգացմանը, այդ ռեսուրսների հիման վրա |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բարձրորակ զբոսաշրջայի արդյունքի ձևավորմանն ու մշակութային զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագիր |
| 16. | Առողջարանային զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն | 2010 թվականի 4-րդ եռամսյակ | Հայաստանում առկա հանքային ջրերի հարուստ պաշարների հիման վրա անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման միջոցով առողջարանային զբոսաշրջության զարգացման ծրագիր |
| 17. | Ձմեռային զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2011 թվականի 2-րդ եռամսյակ | Հայաստանում զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը, ձմեռայի սպորտաձևերի զարգացմանն ու տարածաշրջանում Հայաստանի՝ որպես լեռնադահուկային խոշոր կենտրոնների երկրի նշանակության ձևավորմա ուղղված ծրագիր |
| 18. | Գյուղական զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ | 2011 թվականի 4-րդ եռամսյակ | Ագրոզբոսաշրջության, գին և խաղողի զբոսաշրջությա զարգացմանն ուղղված ծրագիր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19. | Էկոզբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ բնապահպանության նախարարություն | 2012 թվականի 2-րդ եռամսյակ | Էկոզբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագիր |
| 20. | Առողջապահական զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը | | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2012 թվականի 4-րդ եռամսյակ | Առողջապահական զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագիր |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ